ԿԱՅԾԱՅԻՆ ՊԱՐՊՈՒՄ

Գազային պարպման օրինակ է կայծային պարպումը: Եթե երկու էլեկտրոդների միջև լարումն աստիճանաբար մեծացնենք, ապա լարման որոշակի արժեքի դեպքում նրանց միջև կառաջանա **էլեկտրական կայծ**: Այն ունի ծռմռված, ճյուղավորված տեսք և ուղեկցվում է լուսարձակմամբ և յուրահատուկ ձայնով: Կայծային պարպումն առաջանում է այն դեպքում, երբ գազում էլեկտրական դաշտի լարվածությունը հասնում է որոշակի E_c կրիտիկական արժեքի: Լարվածության այդ արժեքը կոչվում է **միջավայրի ծակման լարվածություն**: Օդի համար սովորական պայմաններում $E_c = 3 \cdot 10^6$ Վ/մ: Կայծային պարպման բնական օրինակ է կայծակը, որի մասին գիտեք 9-րդ դասարանի ֆիզիկայի դասընթացից: